ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 12-Լ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 26-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշման հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2020 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության Օպերատիվ կառավարման կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 26-Լ հրամանով հաստատված հավելվածում՝

1) 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«11. Կենտրոնն իր աշխատանքները կազմակերպում է ենթակառուցվածքային ստորաբաժանումների և Կենտրոնին ենթակա մարզային ստորաբաժանումների միջոցով:»,

2) 17-րդ կետից հետո լրացնել նոր «17.1.» կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«17.1. Կենտրոնին ենթակա մարզային ստորաբաժանումներն իրականացնում են սույն հավելվածի 14-րդ կետի 1-10-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ ենթակետերով նախատեսված գործառույթները:»,

3) 20-րդ կետից հետո լրացնել նոր «20.1.» կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«20.1. Կենտրոնին ենթակա մարզային ստորաբաժանումների աշխատանքները ղեկավարում և կազմակերպում են նշված ստորաբաժանումների պետերը:»:

2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողներին և աշխատակիցներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ

Վ.ՂԱԶԱՐՅԱՆ

«06» 04 2022թ.

ք.Երևան